ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<29>> ապրիլի 2013թ. N: 104-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՇՏԱՊ ԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՌՈԲԵՐՏ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՌՈԲԵՐՏ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 70-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 25-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» որոշումը, եզրակացությունը և Ռոբերտ Թորոսյանի 2013 թվականի ապրիլի 26-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2013 թվականի ապրիլի 29-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնակատար Ռոբերտ Թորոսյանի լիազորությունները:
2. Ռոբերտ Թորոսյանին 2013 թվականի ապրիլի 29-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում և նրա հետ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետով կնքել աշխատանքային պայմանագիր:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է: